**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ**
**ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

N 03/09.1/4980-2020

«.....»
.....................2020թ.

**«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ-Ի ՏՆՕՐԵՆ ՇՈՒՇԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ**

**Հարգելի տիկին Պողոսյան,**

Ի պատասխան Ձեր՝ 2020 թվականի սեպտեմբերի 3-ի գրության՝ ստորև ներկայացնում եմ առաջադրված հարցերի պատասխանները.

- թոքերի արհեստական շնչառության սարքերի ստեղծման գաղափարների մասնագիտական ուսումնասիրության, նախագծման և մակետային նախատիպի մշակման աշխատանքները մեկնարկել են 2020թ. մայիսի 15-ին: Աշխատանքները նախատեսվում է ավարտել 2020թ. դեկտեմբերի 27 - ին:
- ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և «Ինժիներական ասոցիացիա» հասարակական կազմակերպության միջև կնքված պայմանագրով նախատեսվում է ասոցիացիային տրամադրել ընդամենը 90 մլն. ՀՀ դրամ, որից 45 միլիոն դրամի փոխանցումն արդեն կատարվել է:
- պայմանագրի շրջանակներում հաջողությամբ ավարտին են հասցվել պահանջների ձևավորման (ֆունկցիոնալ և տեխնիկական չափորոշիչների ձևավորում, համաձայնեցում և հաջորդ փուլերի նախապատրաստական աշխատանքներ) և մակետային նախատիպի մշակման (համակարգի նախագծում, մակետային նախատիպի մշակում, լաբորատոր փորձարկում և հաջորդ փուլերի նախապատրաստական աշխատանքներ) փուլերը:
- թոքերի արհեստական շնչառության սարքերի ստեղծման գաղափարների մասնագիտական ուսումնասիրության, նախագծման և մակետային նախատիպի մշակման ծրագրից ակնկալվում է 5 օրինակ մշակված ինժեներական նմուշ՝ պատրաստ կոնստրուկտորական փաստաթղթերով:

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 3/3, հեռ. (37410) 590161, էլ. փոստ viktoria.poghosyan@hti.am

Invalid signature

X 

ՎԻԿՏՈՐԻԱ ՊՈՂՈՍՅԱՆ

**Հարգանքով՝**

Signed by: POGHOSYAN VIKTORIA 5703820294

**ՎԻԿՏՈՐԻԱ ՊՈՂՈՍՅԱՆ**

Բարձր տեխնոլոգիաների վարչություն
Կատարող՝ Ա. Վարդանյան, 010 590 124